

Կիւրիինի ամբողջ հայ երիտասարդութիւնը իբր զինուոր տարուած էր եւ միայն կիւներ, ծերեր, պատանիներ եւ մանուկներ մնացած էին: Օրէ օր աւելի վհատեցուցիչ եւ անշնչելի կը դառնար մթնոլորտը, իսկ ժողովուրդը՝ ահաբեկ: Գպրոցը բաց էր, բայց ուսուցիչներն ալ իբր զինուոր տարուած ըլլալով՝ նոյն տարուան շրջանաւարտներէն մին իբր ուսուցիչ վարձուած էր մեր Պարթեւեան Վարժարանին համար: Ան առաջին օրէն մեզի յայտնեց թէ մենք ուսուցիչ եւ աշակերտներ չենք, այլ պարզապէս ընկերներ որ իրարու չզլտցածը եւ մոռցածը պիտի սորվեցնենք:

Շուրջերնիս այր մարդ չէր մնացած, քահանայ, ուսուցիչ ալ չկար: Գպրոցնիս գապթիաներու կեդրոն դարձաւ:

Այդ տարուան յորդառատ անձրեւներէն պարտէզնուս վարի մասը, որ ձորին մօտ եւ ցած էր, ողողուած ըլլալով, հայրս այդ մասին չաւտար ցանեց որ նորէն մարգագետին ըլլայ յաջորդ տարին: Օր մը հայրս ձեռքէս բռնած շաւար ցանուած տեղը տանելով՝ ըսաւ «տղա՛ս Ծերո՛ւն, ես պիտի երթամ տունէն, մեծը դուն ես, մօրդ եւ եղբայրներուդ լաւ նայէ եւ շաւարը հանելով տունը դրէք, թերեւս պէտք ունենաք ատոր ալ...»: Հայրս փղցկեցաւ, իսկ ես սկսայ լալ: Առանց իրեն հարցնելու թէ ո՞ր եւ ինչո՞ւ կ'երթայ, քանի որ բնազդաբար կը զգայինք աղէտին մօտենալը:

Քանի մը օր վերջ Կիրակի էր եւ դայինք Սազին Պողոզէն ճամբելու հայրս Սերաստիոյ ուղղութեամբ տարագրուողներուն կարաւանին մէջ: Երբ վերջին ողջագրումի ժամը եկաւ՝ հայրս մէջքի դօտին հանելով հօրաքրոջս տուաւ, ըսելով, առ դօտի դօտիի վրայ կապէ, եւ դաւակներուս տէր եղիւր, քոյրիկ:

Աշնանային օր մը, մայրս ըսաւ որ երթամ հօրաքրոջս տունէն դոյլը առնեմ ու ջուր բերեմ: Հոն դիպուածով տեսայ, իր պահուըտած տեղին մէջ, հօրաքրոջս երկրորդ աղջկան ամուսինը, Վարդեվար Չաքմաքճեանը որ զինուորական փախստական ըլլալով՝ եկած էր զոքանջ մօր տունը ապաստանելու, իր ընկերոջ Պետրոս Շամամեանի հետ: Երկուքն ալ կը ճաննայի, մեր թաղեցիները էին: Անոնք ինծի խրատեցին, որ որեւէ մէկուն չյայտնեմ զիրենք տեսած ըլլալս, որովհետեւ եթէ բռնուին՝ զիրենք հրացանազարկ կ'ընեն, նաեւ տունին տէրերը: Բայց նոյն գիշերը երկուքը միասին մեր տունը փոխադրուեցան, աւելի ընդարձակ ըլլալուն համար, իսկ հօրս շինած դաղտնի ծակ ու ծուկերը աւելի օգտակար կրնային ըլլալ իրենց պահուելուն: Անոնք բաւական երկար մնացին մեր տունը եւ ալ իրենց մատակարարութեան պաշտօնը ստանձնած էի:

Ծննդեան խթումի օրն էր: Մեր տունին մօտերը գապթիաներ երկու մարդիկ կը հետապնդէին իբր ծխախոտի մաքսանենգ: Թէեւ կը յաջողին մարդիկը բռնել, սակայն ծխախոտը արդէն անգտանելի եղած ըլլալուն՝ այդ շրջանի տուները կ'ուզեն խուզարկել եւ ամենամօտիկը մեր տունը ըլլալով՝ առանց այլ եւ այլի դռնէն ներս կը խուժեն: Մայրս որ թրքերէն ալ չէր գիտեր (Կիւրիւնցիք բացարձակապէս հայախօս էին եւ շատեր բառ մը իսկ թրքերէն չէին գիտեր), քրոջս օրօրոցին ծոած կաթ կու տայ եղբր: Ոստիկանները տեսնելով՝ վախէն լեղապատառ՝ ապլայ կը պրոսայ հօրաքրոջս: Տունը նըստած՝ լսեցինք մօրս ձայնը: Հօրաքրոյրս ծանօթ էր շատերուն իբրեւ բժշկուհի վիրաբոյժ, նմանապէս փորձառու եւ յանդուզն ըլլալով՝ կը վագէ մեր տունը

կը սկսի բարկացած կանչել զապօխաներուն, թէ ի՞նչ իրաւունքով, առանց լուրի, անտէր անտիրական կնոջ մը տունն են մտած : Զապօխաները կը բացատրեն պատահարը եւ հօրաքրոջն ընկերակցութեամբ կը սկսին տունը խուզարկել : Երկու փախստականները խոհանոցին մէջ ըլլալով՝ առիթ չեն գտնէր թագստոցնին մտնելու : Սակայն անոնք հրազէնները ձեռքերնին կը սպասեն : Բարեբախտաբար ոստիկանները չեն մտներ հոն :

Յաջորդ օր նկատելով որ կացութիւնը կը վատթարանայ, դացին դիշերով իրենց ընտանիքներէն հրաժեշտ առնելով՝ ծովուն ետեւ գտնուած քարայր մը ապաստանեցան : Բայց կառավարական ուժերէ պաշարուելով՝ շարաթ մը դիմադրութենէ վերջ, եղած խոստումներուն հաւատալով, թէ ներումի պիտի արժանանան՝ յանձնուեցան : Քանի մը օրեր ետք անոնք դէպի Սերաստիա ճամբայ հանեցին եւ հակառակ եղած խոստումին՝ երկուքը եւ ուրիշներ ալ միասին Սերաստիոյ մէջ կախաղան հանուեցան :

Անցան ամիսներ, ամէն օր իրարմէ վատ լուրերով ու պատահարներով : Կիրակի օր մը, զապօխաները թաղերը ինկած էին մնացած տղայ մարդիկը հաւաքելու : Անոնք սկսան պատանիները՝ մեզ բոլորս դպրոցին բակը լեցնել, իբր թէ դպրոց պիտի տանէին կարգալու :

Երբ թաղին 13-էն 15 տարեկան տղաքը դպրոց հաւաքեցին՝ քանի մը զապօխաներու ընկերակցութեամբ բոլորս միասին Շուղուլի բողոքականաց վարժարանը տարին, ո՞ւր գտանք Խօրէնի եւ Շուղուլի վարի եւ վերի թաղերուն տղաքը, որոնց կարգին մենք ալ ծալլապատիկ նստանք տախտակամածին վրայ : Երեկոյեան մօտ, բարձրատիճան պաշտօնանար մը դալով մեզմէն մաս մը եւ ինձ գատելով հրամայեց տուններնին երթալ : Մաս մը տղաք ճամբայ ելանք դէպի Խօրէն առանց չորս կողմերնին նայելու :

Երբ մեր թաղի եկեղեցիին քով հասանք, թէեւ գիշերուան մութը իջած էր՝ նորէն թաղի ողջ ժողովուրդը հոն հաւաքուած էր : սկսան վերադարձողներս՝ ձեռքէ ձեռք խըլլելով համբուրել ու լալ, արդեօք իրենց բաժնուած ամուսիններուն, եղբայրներուն ու հայրերուն կորուստին ցաւէն, թէ մեր վերադարձի ուրախութենէն էր արտասուները :

Մեզի հետ տարուած միւս տղաքը, մեր բաժնուելէն յետոյ, դէպի կառավարատուն ճամբայ հասած են եւ բանտարկած : Յաջորդ օրերուն զանազան խոստումներով եւ շարժարանքներով հաւատափոխութեան առաջարկներ ըրած են բանտի տղոց, որոնցմէ մաս մը ըսուեցաւ թէ կրօնափոխութիւնը ընդունելով ազատ արձակուած են : Տղոց ցոյց տուած են զանազան ծանօթ ազգայիններու յայանի ինչքեր, ըսելով թէ բոլորը մօրթուած են եւ եթէ իրենք ալ խլամութիւնը չընդունին՝ նոյն բախտը իրենց ալ կը սպասէ :

Մէկ երկու շաբաթ տղաքը այդպէս փորձերէ վերջ, օր մըն ալ ըսուեցաւ թէ կրօնափոխութիւն չընդունող տղաքը՝ կապուած վիճակով բերին եւ Խօրէնի տակէն Եօնճալքի ճամբայէն տարին Ատանայի ուղղութեամբ նահատակելու :

Աղետալի ու շարագուշակ օրեր կը յաջորդէին իրարու : Օր մըն ալ լուր մը եկաւ թէ ձախձորը հայերը աքսորուած են :

Իսկ Վարդեմառի Կիրակին, առաւօտ շատ կանուխէն, զապօխաներ եկած եւ սեւ լուրը տարածած էին ամէն կողմ, թէ աքսոր պիտի երթայինք Խօրէնցիներս : Վարի եւ վերի թաղեցիք բոլորն ալ հայեր, հաւաքեցին եւ կէսօրին ճամբայ ելանք լաց ու կոծով : Իրիկունը բաց դաշտի մը վրայ, յոգնած

ու սրտարեկ իջեանցինք: Առաջին գիշերն էր եւ աքսորականի կեանքը սկը-
սած էինք:

Յաջորդ առաւօտ նորէն ճամբայ ելանք եւ երրորդ օրը հեռուէն տե-
սանք, Ալպիստանը, ուր հասանք յետիջորէին: Ճամբուն երկու եզերքին
չարուած թուրքեր աղջիկ փախցնելու փորձեր ըրին: Սակայն Սուլթան տու-
տուն, որ այժմ Հալէպ է եւ Հօրաքոյրս Վարդէն ապլան, որ հաւրանի գիւ-
ղերէն մէկուն մէջ մեռաւ աքսորութեան մէջ եւ ուրիշ տարեց կիներ՝ կարա-
ւանին երկու կողմէն պատուար քաշելով, հասանք լքուած խան մը, ուր մէկ
օր հանգիստ տուին, պատուիրելով որ խանէն դուրս չելենք:

Ալպիստանէն ճամբայ հանցին մեզի, քանի՞ օր էինք քալած չեմ յի-
շեր՝ գետակէ մը անցանք: Հրամայեցին որ գետեզրին կարաւանը կանգ առնէ:
Ամէն ոք իր գոյքերը տեղաւորելէ վերջ, սկսան ափ մը ձաւարէն կամ ծեծա-
ծէն ապուր պատրաստել: Հազիւ կաթսաներուն ջուրերը տաքցած եւ հատերը
մէջը նետուած էին՝ յանկարծ գապթիաները, մտրակը ձեռքերնին՝ հրամայե-
ցին գետեզրէն աւելի վեր բարձրանալ: Դարձեալ սկսաւ լաց ու կոծը, եւ ու-
չացողներու անխնայ մտրակումը: Կերակուրը թափելով եւ հազիւ քակուած
ծրարները հաւաքելով, ելանք ճամբայ:

Չուլումը իր խոժտուժութեամբ եւ աքսորը իր ամբողջ տաժանու-
թեամբ սկսած են հարուածել մեզ: Արդէն յոգնութենէ ուժասպառ հազիւ մեր
աչքերուն քուն եկած՝ լացի եւ ճիչերու ժխոր մը կը բարձրանայ: Կարաւանին
ընկերացող գապթիաները հարսեր ու աղջիկներ կը պահանջէին: Ամէն մայր,
կին իր հոգեհատորը կը ծածկէր իր փէշերուն տակ՝ կարծես այդ քուրջի կը-
տորները անառիկ բերդեր եղած ըլլային: Պահանջուած եւ տարուած կոյսե-
րուն ու հարսներուն աղէխարչ կանչերը եւ անոնց մայրերուն անէծքները
մթնոլորտը կը լեցնէին:

Յաջորդ առաւօտ նորէն ճամբայ ինկանք. այլեւս ժողովուրդը ամբող-
ջովին յուսալքուած էր եւ գողգոթայի անպատմելի սարսափներուն դէմ հան-
դիման կը յառաջանայինք: Նախորդ գիշերուան ցաւազին դէպքերը վերջիչե-
լու սիրտ չունէինք, իւրաքանչիւր օր նախորդ գերազանցող դիւային պատա-
հարներ կը բերէր: Այսպէս, օրական կողոպուտ՝ քանի մը անգամ, եւ առե-
ւանդումներ, մահեր, գազանային արարքներ...

Ակտուի Կիւրիւնի կողմի եզերքը մեզի բանակաւայր եղաւ երկու օր ու
գիշեր, որ աւելի քարմնելի էր, քան նախորդները: Օր ցերեկով մանուկներ ու
կոյսեր առեւանգել, կողոպուտ եւ ծեծ անպակաս էին: Երբ երկու ամաններով
գետէն ջուր բերելու դացած էի՝ վերադարձիս երկու թուրքեր վրայ յարձա-
կելով՝ մէկը ուս ձգուած պաշլըխս, իսկ միւսը՝ ձեռքիս մետաղեայ դոյլերը
յափշտակեցին: Տարեց կիներ հոս ալ պահապան հրեշտակի դեր կատարեցին
իրենց յանդգնութեամբ ու քաջութեամբ:

Երբ գետին միւս ափը անցանք, գետեզրէն բաւական մը հեռու մարգա-
դետնին վրայ հրամայեցին որ մեր գոյքերը դնենք ու հանգստանանք: Բայց
հազիւ թէ լրացած էր այդ գործողութիւնը, հրամայեցին ետ հաւաքելու կա-
պել մեր ունեցածները, ճամբայ իյնալու: Յուսարեկ եւ ուժասպառ վեր կե-
ցաւ ողջ կարաւանը եւ մեր գտնուած տեղէն 1-2 ժամ հեռու, բլուրի լանջին
տեղաւորուեցանք:

Երկու օրուան հանգիստէ վերջ նորէն ճամբայ ելանք, բայց այս անգամ
մեզի ընկերացող ոստիկանները փոխուած էին եւ Չաքարիա Չաւուչը միասին

էր: Հագիւ ժամուան մը ճամբայ կտրած էինք՝ խոր ձորի մը մէջէն անցանք, որուն երկու լանջերը վայրի ծառերով զարդարուած էին: Այլեւս թլուրին սրտերը վախը պատած էր եւ հագիւ իրարու երես թախծոտ նայուածք մը նետելու համարձակութիւն ունէինք: Այսպէս օրերով քալեցինք, ամէն օր քանի մը անգամ մեծ ու փոքր ասպատականութեան ու կողոպուտի ենթարկուելով:

Վերջին օրն էր որ Այնթապ պիտի հասնէինք եւ դաշտի մը մէջէն կ'անցնէինք, որուն արեւելեան կողմը ցանցառ անտառ մը, իսկ Արեւմտեան կողմն ալ քարայր մը կար: Երկու կողմէն հրացանաձգութիւն սկսան, ի՞նչ կրնար ընել Չաքարիա Չաւուշը: Բայց չյուսահատեցաւ, արեւմտեան կողմը դառնալով՝ սպառնական թոնով մը պոռաց. «Մօ, ինձի Չաքարիա Չաւուշ կ'ըսեն, վալլա՛հի այս ժողովուրդը հոս ձգելով Այնթապ կ'երթամ եւ յաւելեալ ոյժ բերելով՝ վաղուան դուրպան պայրամին ձեր բոլորին գլխուն սեւ կը բերեմ: Եւ դուք ո՛ր զինուորական դասալիքներ էք, վաղն իսկ բոլորդ ալ Այնթապի հրապարակին վրայ կախել կու տամ»: Ասոր վրայ քարայրէն պոռացին «էֆէնտիմ մենք զլիւսցի պաշտպոյտներուն է որ կը կրակենք»: Եւ իրենց զէնքերը պաշտպոյտներուն դարձուցած սկսան կրակել: Իսկ Չաքարիան առեւթէն օգտուելով մօտինը ուղղեց դէպի անտառ եւ կրակեց. ծառին վրայէն «աննն» պոռալով մէկը դլորեցաւ: Սակայն աւազակները արդէն ժողովուրդին խանուած էին եւ ինչ որ ձեռքերնին անցնէր՝ կը խլէին եւ հոս ու հոն զէնքեր անդադար կը պայթէին: Բայց Չաքարիան յուսահատող մարդ չէր, ձիուն վրայ, մէկ ձեռքը մտրակը՝ իսկ միւսին ալ հրազէնը բռնած սկսաւ աւազակները հալածել: Կէս ժամէն արդէն գայլերը գառներէն դատուած էին: Անոնք իրենց աւարը քիչով կամ շատով կը տանէին, իսկ մենք փառք կու տայինք, որ ամբողջական եւ ստոյգ կոտորած է մը փրկուած էինք: Ճամբանիս շարունակեցինք դէպի Այնթապ եւ նոյն երեկոյեան հասանք զետին հիւսիսային կողմը: Վարդեվառի Կիրակին Կիւրիւնէն ճամբայ ելլելով՝ դուրպան պայրամի օրը Այնթապ հասանք:

Այնթապ հասնելուն՝ տակաւին հայեր կային, որոնք մեզ կերակրեցին եւ մաս մ'ալ մերկեր հագուեցուցին: Կիրակի էր, թէեւ մեզի արգիլեցին քաղաք մտնել, բայց քանի մը ինձի հասակակիցներու հետ միասին գետէն անցնողիւ կեղեցին գտանք, ուր պատարագ կը մատուցուէր: Օր մըն ալ Այնթապ հանգստանալէ վերջ, նորէն ձեռք առինք «ճանապարհ խաչին» եւ երեկոյեան Քիլիս հասանք, ո՛ւր խաներուն մէջ գիշերել արտօնեցին, եւ ջաջորդ առտուն մեր ճամբան շարունակեցինք: Ծոգեկառք պիտի տեսնայինք, եւ ահա հեռուէն փայլը տեսանք օձի պէս երկայն զուգահեռ պռակած երկաթուղիի դիժերուն եւ վերջապէս հասանք, Գաթմայի Կայարանը:

Գաթմա՛. Հայկական առաջին խոռոնարա՞ն, համազգային ուխտատեղի՞: Հոն հաւաքուած էր հայութիւնը իր հոծ զանգուածով, երկրին ամէն կողմերէն հոն էին եկեր Ատանացիք, Կեսարացիք, Գոնեացիք, Մերսինցիք եւ նոյնիսկ քանի մը օրեր առաջ մեզի կերակրող ու հագուեցնող Այնթապցիներ: Գաթման իր կարմիր հողով հայուն զանգուածային առաջին գերեզմանն էր, ո՛ւր օրտիսն տասնեակներով սկսած էին մահանալ: Զուր չկայ, շուք չկայ, կարմիր հողը շատ անհատուած եւ խմելիք ջուրն իսկ կայարանէն աւելի քան կէս ժամ հեռու գիւղէն պէտք է բերել, ուր հորէն հանելու եւ կարգ առնելու համար երկար պէտք է սպասել:

Մեր երկու եւ հօրաճրջ մէկ էլը երեքը միասին մէկ մէծիտի ծախե-

ցինք, որոնց համար ահագին տնային առարկաներ տուած էինք մեր տան «բարեկամ» թուրքերուն :

Մօտ տասն եւ հինգ օրեր Գաթմա մնալէ վերջ, շոգեկառք դրին մեզ եւ խառնուեցանք մեծ սպանդին, երբ առաւօտ մը աչքերնիս բացինք՝ Հալէպի կայարանն էինք, ուր շոգեկառքը իր պիտոյքները առնելէ յետոյ, նորէն սկըսաւ թաւալիլ առաջ, Հալէպն ալ իր եւ մեր հտին ձգելով : Երեկոյեան Բայեադ հասանք, ուր շոգեկառքը փոխելով ճամբանիս շարունակեցինք դէպի Դամասկոս : Կիւրիւնէն մինչեւ Գաթմա մեր կրած նեղութիւնները, չարչարանքներն ու կողոպուտները գրեթէ մոռնալու վրայ էինք եւ յուսահատի մեր դիմազօծերը բարեխառուելով կարծես դէպի կեանք էին դարձած :

Արեւի առաջին ճառագայթները Դամասկոսի կայարանը ողջունեցին մեզ, ուր եւ Օսմ. «բարեխեղճ» կառավարութիւնը անձ դրուելու ութնական հաց բաժնելով ճամբու դրաւ : Կարծես կ'ուզէինք մոռնալ լեռներու կատարէն ու ձորերու խորերը բոկոտն, մերկ ու գլխարաց արեւուն կիզիչ ճառագայթներէն, վախէն ու սոսկումէն յուսալքուած, թուրք ու քիւրտ դահիճներէն հալածական մեր երկար ճամբորդութիւնը :

Շոգեկառքը հասաւ Տըրքաս', ուր վար թափեց մեզ : Հաւրանի սահմանին հասած էինք եւ փոռուեցանք կայարանին առջեւի դաշտին վրայ, ուր արդէն շատեր եկած էին մեղմէն առաջ եւ շատեր ալ պիտի դաշին միանալ իրենց ազգակիցներուն : Մինչ Տէր-էլ-Ձօրի կողմերը դրկուած իրենց եղբայրները՝ թուրք կանոնաւոր զինուորներու սուխին, չէչէն, չէրքեզ, թուրք, քիւրտ եւ տեղացի այլ ժողովուրդներու սուրին, կապարին, տապարին ու լախտերու հարուածին տակ կ'իյնային :

Մեզի համար կը սկսէր նոր կեանք մը, արաբական հողերու վրայ : Ունեցանք այլազան դժուարութիւններ, բայց զանգուածային կոտորածի սարսափը չկար : Թշուառ էինք, այլեւս կողոպտող չէինք ունենար :

ԾԵՐՈՒՆ

9. — ՎԱՐԴԱՆ ՉՂԸԼԵԱՆԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ԱՐԱՐՔԸ

Այլեւս յստակ էր, որ կը պատրաստուէր աղէտ մը : Թուրք իշխանութիւնները սկսած էին խիստ եւ վերապահ ընթացք մը ցոյց տալ հայ զանգըրուածին հանդէպ : Ոստիկանական եւ զինուորական շարժումները, հսկողութեան ծաւալուն ընթացքը, հակահայ տրամադրութիւններու զարգացումը եւ դրսեւորումը, պարզ մարդոց կողմէ իսկ, բացայայտ նշաններն էին, որ արտակարգ վտանգի մը նախադրան առջեւն էինք : Ձօրակոչէն յետոյ, քիչ անց արդէն սկսան հետապնդումներն ու ձերբակալութիւնները կարեւոր դէմքերու եւ ազգայիններու : Բանտերը լեցուեցան դեռ քաղաքը մնացած հայերով : Արիւնի, կրակի, քանդումի հոտ կար հոտ ու հոտ երթեւեկող, սպառնալիքներ տիրացող ոստիկանին եւ իշխանութիւններու շունչին, նայուածքին եւ կարգադրութիւններուն մէջ : Կարեւոր հայ ուժ ներկայացնողները կանչուած էին բանակ, հաւաքուած էին զէնքերը բոլոր կողմերէն : Անգէն, իր լաւագոյն տարրերէն պարպուած անպաշտպան զանգուած մը կար այլեւս Կիւրիւնի մէջ :

Դիմադրական ուժ եւ կազմակերպութիւն չկար ամբողջ շրջանին մէջ, եւ չէր ալ կրնար ըլլալ այդ պայմաններուն տակ : Հայ ազգային մարմինները երկրին պետական կարգադրութիւններուն հետ եղած էին, դռնէ ներքին անդորրութիւն մը ապահովելու միամիտ հեռանկարով : Միայն քանի մը փա-